FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Հրատարակուել է
Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան
հովանաւորութեամբ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1-12 ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ ՃԻԶ. ՏԱՐԻ 2012

ԵՂԻԱ ԱՐՃԻՇԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹՂԹԵՐԸ (Ը դար)

Ալեքսան Յակոբեան

Եղիա Արճիշեցին Հայոց կաթողիկոս դարձաւ 703 թ. եւ 14 տարի պաշտօնավարեց հայ ժողովրդի համար պատմական ծանրագոյն մի դարաշրջանում (703-717 թթ.)[1]*: Նրանից մեզ են հասել երկու թղթեր, որոնց մասին մինչեւ վերջերս գիտէինք միայն Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու (թէ՛ գրականութեան մէջ, թէ՛ աղբիւրների ու ձեռագրերի մի մասում կոչուած նաեւ* Կաղանկատուացի[2]*)* Պատմութիւն Աղուանից *անունը կրող երկում (այսուհետեւ՝* ՊԱ*) պահպանուած տարբերակներով*[3]*: Հայագիտութեան մէջ ընդունուած է, որ Եղիան եղել է Արաբական խալիփայութեանը ենթակայութեան եւ հակաքաղկեդոնական պայքարի ակնառու դէմքերից մէկը, ինչպէս որ երեւում է հէնց նշուած ու մի քանի՝ նոյն դէպքերին վերաբերող այլ փաստաթղթերի բովանդակութիւնից:*

Այդ աւանդական կարծիքին որոշ չափով հակասում է լոկ Յովհան Օձնեցի կաթողիկոսի (717-729 թթ.)՝ «Գիրք թղթոց»-ի օրինակներում պահպանուած Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս *երկի*[4] *պնդումը, ըստ որի՝ հեղինակի նախորդ պաշտօնակիցները, Եզր Արահեզացուց մինչեւ Եղիա Արճիշեցին ներառեալ, իբրեւ թէ եղել են քաղկեդոնականութեան (մենք պէտք է հասկանանք՝ միակամութեան - մոնոթելիզմի տարբերակը) հետեւորդներ:*

Յովհան Օձնեցու նշուած պնդմանն անխուսափելի վերապահութեամբ մօտենալով հանդերձ, նրա հետ միասին, գուցէ, անհրաժեշտ է քննարկել Շապուհ Բագրատունի պատմիչին վերագրուած մի ձեռագրական կտորի հետեւեալ վկայութիւնը. «Սահակ [Ձորոփորեցի] կաթողիկոս կենդանի իէ ամ գերի գոլով՝ դնի Եղիա կաթողիկոս: Սա գներսէս՝ եպիսկոպոսն Աղվա-

1 Մ. արքեպս. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 2001, էջ 931-952:

2 Վերջին անգամ մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 150-177, 211-242:

3 **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Եր., 1983, գիրք Գ, գլ. Ե, էջ 295-296 եւ գլ. Թ, էջ 303-304:

4 Պահպանուած բոլոր ձեռագրերի օգտագործմամբ երկի վերջին հրատարակութիւնը տե՛ս Յովհան կաթողիկոս Օձնեցի, *Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս*, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, - ՀԱ, ՃԻԳ տարի, Վիեննա-Եր., 2009, էջ 61-107:

ՀԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՄԱՐ
632-2012

© National Library of Armenia

նից, եւ զտիկին աշխարհին մատնէ Օմարայ, զորս կապեալ տանին առ նա եւ սպանանեն զնոսա վասն Բաղկեդոնի լինելոյն: Իսկ հայրապետն հակառակ Օմարայ համբաւեալ՝ տայ սպանանել, [կացեալ] չորեքտասան ամ կաթողիկոս. եւ ապա՝ Օհան Օձնեցին, որ եւ գնաց առ Օմար»[5]: Այս վկայութեան մանրամասն քննութիւնը թողնելով այլ առիթի՝ նշենք միայն, որ Եղիայի կեանքի վերջին հատուածի մասին այլ տեղեկութիւններ մեզ յայտնի չեն:

Հայագիտութեան մէջ վաղուց նկատուած է, որ Մովսէս Դասխուրանցու երկում օգտագործուած աղբիւրների ճշգրիտ վերհանումը եւ քննութիւնը մասնագէտներին թոյլ է տալիս մի՛ կողմից գործ ունենալ աւելի վաղ աղբիւրների բառացի արտագրուած վկայութիւնների հետ, մի՛ւս կողմից՝ առանձնացնել ՊԱ հեղինակի յաւելումներն ու ամբողջապէս սեփական շարադրանքը: Միայն այս վերջիններն ի մի բերելով ենք մենք իրական պատկերացում կազմում Ժ դարավերջին ստեղծագործած արցախցի հեղինակի իմացութիւնների, աշխարհայացքի, նպատակադրումների եւ կատարած ինքնուրոյն աշխատանքի մասին: Ամեն մի նոր աղբիւրի բացայայտումը եւ համեմատութիւնը ՊԱ պահպանուած բնագրի հետ աւելի է խորացնում մեր գիտելիքը միջնադարեան հայ ուշագրաւ ու բարդ մատենագիրներից մէկի մասին:

1981 թ. Մաշտոցի անուան Մատենադարանի երկու ձեռագրերում՝ թիւ 2966 (ԺԷ դար, գրիչ՝ Ղուկաս երէց, Կոստանդնուպոլիս) եւ 3062 (1765-1767 թթ., գրիչ՝ Խաչատուր Կոստանդնուպոլսեցի, Վաղարշապատ), մենք նկատեցինք Յաղագս Եղիայի Հայոց կաթուղիկոսի *վերտառութիւնը կրող մի փաստաթուղթ եւ, հրատարակելով նորայայտ բնագիրը, փորձեցինք նաեւ փաստարկել, որ այն կարելի է համարել ՊԱ հատուածներից մէկի աղբիւրը[6]: Այդ հատուածում (ՊԱ, գիրք Գ, գլ. Գ-Ժ) Մովսէս Դասխուրանցին մանրակրկիտ ձեւով ներկայացնում է Հայոց կաթողիկոս Եղիա Արճիշեցու գործունէութիւնն Աղուանքում[7]: Նրան դիմել էին Աղուանից նախարարներն ու հոգեւորականները, դժգոհելով իրենց կաթողիկոս Ներսէս Բակուրից, որն ամուսնակորոյս Սպրամ իշխանուհու յորդորներով քաղկեդոնականութեան էր յարել եւ անթաքոյց բիւզանդական կողմնորոշում որդեգրել (գլ. Գ.գ - «Վասն Բակուրայ ումեմն* [bclrv *որում*] *Ներսէս անուն, եղեալ կաթողիկոս Աղուանից»[8] եւ Գ.դ - «Թուղթ ժողովոյն Աղուանից առ Եղիա Հայոց կաթողիկոս»): Եղիան, որն ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու ունեցած տեղեկատուութեան՝ 2-3 նամակներով անյաջող փորձ էր կատարել՝ լուծելու Աղուանքում ծագած խնդիրը[9], ի վերջոյ այդ տեղեկութիւնն իր թղթով փոխանցում է արաբ խալիփային՝ «ամիրմոմնի»-ին (ՊԱ, Գ.ե - «Թուղթ Եղիայի* [bclrv *չիք Եղիայի*] *Հայոց կաթողիկոսի առ Աբդլմելք ամիրմոմնի* [*ա Աբդղմեղք ամիրմումնի*]») եւ վերջինից պատասխան թուղթ ստանում (ՊԱ, Գ.զ - «Պատասխանի թղթոյն Եղիայի* [bclrv *չիք Եղիայի*] *Հայոց կաթողիկոսի* [bclrv *չիք կաթողիկոսի*] *յԱբդլմելքէ* [bclrv *յԱբդլմելքայ*] *ամիրմոմնոյ»): Այս թղթերի բովանդակութիւնն արդէն Ժ դ. սկզբին համառօտ շարադրել է Յովհաննէս Դրասխանակերտցին[10], իսկ նրանից հետագայում էլ աւելի համառօտ քաղել են ուրիշ պատմիչներ[11]:*

Յաջորդ գլխում Դասխուրանցին պատմում է, թէ ինչպէս Եղիան ժամանեց Աղուանից երկրի մայրաքաղաք Պարտաւ (Հայաբնակ Ուտիք նահանգում) եւ տեղի իշխանների ու արաբ զօրավարի հետ

---

5 Տե՛ս *Պատմական հատուածք՝ հանեալ ի ձեռագրաց Կարապետ վարդապետի Շահնազարեանց, որք կարծին զոյ Շապհոյ*, [Հրատ.՝ Հ. Ղ. վրդ. Տայեան], - «Բազմավէպ», 1922, էջ 70. վերահրատ.՝ Անանուն Զրուցագիր (Կարծեցեալ Շապուհ Բագրատունի), *Պատմութիւն*, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, Խմբ.՝ Ա. Յակոբեան, Եր., 2011, էջ 186-192 (հատուածը՝ էջ 191):

6 Տե՛ս **Ա. Յ. Յակոբեան**, *Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորայայտ թուղթը*, - ՊԲՀ, 1981, հ^{մր} 4, էջ 140-152: Նշուած ձեռագրերը փաստաթղթերի ու փոքրածաւալ երկերի ժողովածուներ են եւ աւանդաբար անուանւում են «Գիրք թղթոցի էջմիածնական օրինակներ»: Դրանք մանրամասն նկարագրուած են Գ. Տէր Մկրտչեանի եւ Յ. Գիւլխանդանեանի կողմից որպէս Գեւորգեան ցուցակի թիւ 100 եւ 58 գրչագրեր: Տե՛ս **Գ. Տէր Մկրտչեան**, *Անանիա Մոկացի*, - «Արարատ», 1897, էջ 95-96; **Յ. Գիւլխանդանեան**, *«Գիրք թղթոց»-ի պակասները եւ նրանից դուրս մնացած թղթեր*, - «Արարատ», 1902, էջ 561-566 (նոր, համառօտ նկարագրութիւնը հմմտ. *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա, Եր., 1965, սն. 912 եւ 930-931):

7 Վերջինս 428 թ. ի վեր ընդգրկում էր ինչպէ՛ս Կուր գետից մինչեւ Կովկասեան լեռներ եւ Դերբենդ տարածուող «Բուն աշխարհն Աղուանից» կոչուած երկրի տարածքը (անտիկ ադրիւրների *Ալբանիան*), այնպէ՛ս էլ նշուած թուականին Պարսից արքայից արքայ Վռամ Ե-ի կողմից վերացուած Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիս-արեւելեան Ուտիք եւ Արցախ նահանգները (վերջինը՝ ոչ միանգամից). Սասանեան տիրակալի՝ ըստ ամենայնի, նոյն հրամանագրով դրանք ընդգրկուել էին նորաստեղծ վարչական միաւորի՝ *մարզպանութեան-շահիրի* կազմում, որն ստացել էր իր գլխաւոր հատուածի անուանումը՝ «Աղուանք», միջին պարսկերէնով՝ «Առան» կամ «Ռան» (մանրամասն տե՛ս **Բ. Ուլուբաբեան**, *Հիւսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը*, - ԲԵՀ, 1975, հ^{մր} 2, էջ 149-164; **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիս-արեւելեան մարզերի վարչա-քաղաքական կացութիւնը 387-451 թթ.*, - ԲԵՀ, 1976, հ^{մր} 2, էջ 77-95; **Б. А. Арутюнян**, *Административное деление закавказских владений Сасанидского Ирана соглано труду Елишэ*, - «Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979, էջ 19-35; **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 109-114; **И. Г. Семенов**, *Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв.*, Автореф. дисс. ... канд. ист. наук, Махачкала, 2002, էջ 14):

8 Հմմտ. *ՊԱ*, Գ.գ, էջ 293: Այստեղ եւ ստորեւ կատարում ենք որոշ սրբագրումներ՝ ըստ մեր կազմած եւ հրատարակութեան պատրաստ՝ Դասխուրանցու երկի նոր գիտա-քննական բնագրի, նշելով միայն կարեւոր ձեռագրական տարընթերցումները (ՊԱ գրչագրերի հանգամանալից քննութիւնը եւ ճիւղագրութիւնն առայժմ տե՛ս **Ա. Յակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, - «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-144; նոյնի՝ *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք)*, Վիեննա-Եր., 2009, էջ 97-98, ծնթ. 32; **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 150-161):

9 Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 99; *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 418-419 (բնագիրն է. «Բայց յաւուրս մեծ հայրապետին Եղիայի Ներսէս ոմն, որ յայնժամ եպիսկոպոսապետ էր Աղուանից, ի հրապոյրս ամբարշտութեան զինքն բերեալ՝ չարադաւան գտանէր չար աղանդոյն Քաղկեդոնի. ընդ նմին եւ տիկին ոմն համաձայնեալ նմա, որ յայնժամ հրամանատար Աղուանից էր: Եւ այսպէս երկաքանչիւրք նոքա միաբանեալ՝ ջանահնար լինէին զբոլոր աշխարհն ածել ի մարդապաշտ հայհոյութիւն տոմարին [*ձձ տաւմարին*]/ Լեւոնի: Իսկ նախարարք աշխարհին իմացեալք՝ զեկուցին մեծի հայրապետին Եղիայի, որոյ գուն ի վերայ գործեալ ոգւով չափ եւ բազում նմանակ հաւատոյ աստուածական պատգամաւք առ նոսա առաքեալ երկիցս եւ երիցս անգամ՝ ոչ եւս զդջացան դառնալ ի մարդադաւան մոլորութենէ իւրեանց: Ապա մեծն Եղիա զիմաստութիւն եւ զընդարձակութիւն սրտի ի գործ արկեալ [*ձձ առեալ*]/, գրէ թուղթ առ ամիրապետն Իսմայէլեան Ոմար...»):

10 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** *Պատմութիւն Հայոց*, էջ 99-100; *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԱ, էջ 419: Երկրորդ թղթին համապատասխանող հատուածն է. «Զայս ապա ընթերցեալ [*տպ.* ընթերցաւ] ամիրապետն՝ շնորհակալութեամբ մեծաւ պատուէ զառաքեալ դեսպանն [*ձձ* դեսպակն]/ մեծի հայրապետին, եւ ինքն յղէ զոմն ներքինապետ իւր, վաղվաղակի առ ինքն հրամայէր հասուցանել զՆերսէսն հանդերձ տիկնաւն: Որոյ եկեալ եւ ըմբռնեալ զերկաքանչիւրսն [*տպ.* զերկաքանչիւր]/ զնոսա եւ կապեալ երկաթի շղթայիւք եւ հեծուցեալ յուղտս՝ առնու գնայ առ ամիրապետն: Եւ այսպէս խոհականաբար ի ձեռն մարմնական կրից նոցա զհոգւոյ մահ ի բաց վարատեալ՝ բառնայ զչարն ի միջոյ մեծ հայրապետն Եղիա: Եւ ապա այլ եպիսկոպոսապետ ի տեղի չարափառին Ներսիսի ձեռնադրեալ հաստատէր» (էջ 100 եւ 419):

11 **Ստեփաննոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն Տիեզերական*, Աշխատութեամբ **Ստ. Մալխասեանց**, Սանկտ Պետերբուրգ, 1885, գլ. Բ.բ, էջ 102:

© National Library of Armenia

միասին պաշտօնանկ արեց եւ ձերբակալեց 17,5 տարի աթոռակալած Ներսէս-Բակուրին (686-704 թթ.[12]) ու իր գործակից Սպրամ իշխանուհուն. նրանք դատապարտուեցին աքսորի («ի շղթայս երկաթիս հարեալ՝ անարգանաւք ածցէ ի դուռն արքունի»[13], «ոտն ընդ ոտն բաղազանեալ կապեցաւ ընդ կնոջն եւ հանդերձեալ [bclrv *հանդերձիլ*] *էր վարել ի տար աշխարհ»[14]), սակայն 8 օր անց Ներսէսը վախճանուեց ու թաղուեց շղթայակապ[15]. Պարտաւում կայացած եկեղեցական ժողովն Աղուանից կաթողիկոսարանի սարկաւագապետ Սիմէոնին ընտրում է նոր «հայրապետ» (704-705 թթ.), ինչպէս նաեւ ընդունում կամ հաստատում է քաղկեդոնականութեան դէմ ուղղուած մի քանի փաստաթղթեր: Ժ դարավերջին Մովսէս Դասխուրանցին ձեռքի տակ ունեցել եւ իր երկում արտագրել է հետեւեալ փաստաթղթերը.*

«Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա Հայոց կաթողիկոս ի ժողովոյն Աղուանից վասն միաբանութեան եւ ուխտի հաստատութեան Հայոց եւ Աղուանից» (գլ. Գ.ը).

«Գիր պայմանի [bclrv *պատասխանոյ*] *տեառն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի առ Աղուանս» (Գ.թ).*

«Գիր անուանց նախարարաց Աղուանից ըստ նախադասութեան [a *նախադրութեանն*], *զորս ներքինին Աբդլմելքի ամիրմոմնոյ* [a *ներքինոյն Աբդլմեղքի ամիրի մոմնեոյ*] *տարաւ եւ եդ ի դիւանի* [bclrv *դիւանս*] *արքունի» (Գ.ժ)[16]:*

Շատ հնարաւոր է, որ նոյն ժողովում են ընդունուել նաեւ «Կանոնք տեառն Սիմէոնի [a Սիմեւոնի] Աղուանից կաթողիկոսի յետ կործանման Ներսիսի» (ՊԱ, Գ.ժա)[17], թէեւ այդ մասին բնագրային ուղղակի վկայութիւն չկայ (բացի մեր խնդրոյ առարկայ գրչագրերում մի ակնարկից[18]):

---

12 Ճշգրտուած ժամանակագրութիւնը տե՛ս **Ե. Պետրոսեան**, *Աղուանից աշխարհի կաթողիկոսութեան մի քանի թուականների շուրջ*, - «Էջմիածին», 1984, հմտ ԺԱ-ԺԲ, էջ 84; **А. А. Акопян**, *О хронологии последних событий в «Истории 684 года»*, - «Кавказ и Византия», вып. 6, Ер., 1988, էջ 31-32. հմմտ. նոյնի՝ *Албания-Алуанк* (1987), էջ 277:

13 *ՊԱ*, Գ.զ, էջ 296, տող 14-15:

14 *ՊԱ*, Գ.է, էջ 297, տող 6-7:

15 Այս իրադարձութիւնների քննութիւնը տե՛ս **Ն. Ադոնց**, *Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու*, Աշխատասիրել, ծանօթագրել եւ ներածութիւնը գրել է **Պ. Յովհաննիսեանը**, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 2005, էջ 112-117; **Ա. Շ. Մնացականեան**, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, Եր., 1966, էջ 156-164; **Հ. Ն. Ակինեան**, *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970, էջ 366-375; **А. Тер-Гевондян**, *Армения и Арабский халифат*, Ер., 1977, էջ 80-82; **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VII դդ.)*, Եր., 1981, էջ 267-274. առաւել հանգամանալից՝ **Ա. Յակոբեան**, *Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է դարի վերջին - Ը դարի սկզբին*, - ՀԱ, ՃԺԸ տարի« Վիեննա-Եր.« 2004, էջ 267-292:

16 Կիրակոս Գանձակեցին, որ տուեալ պատմութիւնն ամբողջապէս քաղել է Մովսէս Դասխուրանցու երկից (**Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, Աշխատասիրութեամբ **Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի**, Եր., 1961, գլ. Ժ, էջ 196-197), այս թուղթը կոչում է «մուրհակ» (հմմտ. «Եւ *մուրհակ* ետուն ամենայն նախարարքն Աղուանից եւ ամենայն եպիսկոպոսքն առաջի ներքինոյն՝ հրամանաւ եւ մատեանեաւ արքունի, զի առանց հրամանի կաթողիկոսին Հայոց ոչ ձեռնադրեսցեն [*ձձ* ձեռնադրեն/ կաթողիկոս Աղուանից», էջ 197):

17 Այս կանոնները պահպանուել են նաեւ «Կանոնագիրք Հայոց»-ի ուշ խմբագրութիւնների վերջում «Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի» վերտառութեամբ (տե՛ս *Կանոնագիրք Հայոց*, Աշխատասիրութեամբ **Վ. Յակոբեանի**, հտ. Ա., Եր., 1964, էջ XXXV; հտ. Բ, Եր., 1971, էջ XXXII) եւ հրատարակուել Արսէն Ղլտճեանի կողմից (տե՛ս **Ա. Ղլտճեան**, *Կանոնագիրք Հայոց*, Թիֆլիս, 1913, էջ 201-204):

18 Մերին նախորդող փաստաթղթի (հրատարակուած՝ **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 286) ընդարձակ ակնարկական գլխագիրը իրական պատկերացում է տալիս, թէ ինչ նիւթեր են եղել (ցաւօք, նաեւ մեզ չհասած) նախագաղափար ժողովածոյում: Հմմտ. «Այլ ի նոյն գրոց տեառն Վիրոյի Աղուանից կաթուղիկոսի: Յառաջաբան Պատմութեան աշխարհին Աղուանից: *Կանոնք եւ սահմանադրութիւն* ժողովոյն Աղուանից, որ եղեւ ի ժամանակս Եղիայի Հայոց կաթուղիկոսի, որ էր ԼԱ աթոռակալ [ի] սրբոյն Գրիգորէ» (թ. 120ա եւ 199ա):

Սրանցից առաջին երկուսը վերաբերում են Հայոց եւ Աղուանից կաթողիկոսութիւնների յարաբերութիւններին: Եղիայի «Գիր պայմանի»-ի (գլ. Գ.թ) վերջում ունենք հետեւեալ կարեւոր նշումը. «Ես՝ Եղիայ Հայոց կաթողիկոս հանդերձ իմովք [a իմ] եպիսկոպոսաւքս առի զմիաւորութեան գիրդ *ի ժողովոյդ Աղուանից, եւ* ետու զայս պայմանի գիր *ձեզ. զի մի՛ ոք յանդգնեսցի թիւրել ինչ զեղեալ ուխտադրութիւնդ: Եւ* զերկոսեան համակամ կնքեալ իմով մատանեաւ՝ ետու ի պահեստի *Ներսմիրհական* [a *Ներսմերհի*] *ուխտի ի ձեռն սրբասիրի Քշիկայ* [a *Քշկա*] *հաւր՝ պայման անհոգութեան»: Դժվար չէ ենթադրել, որ նկատի ունենալով դիւանագիտական նորմերը, ընդունուած երկու փաստաթղթերի օրինակները Ներսմիհրի վանքում (այլուր կոչուած՝* Ներսմիրհի *եւ* Զրվշտիկ*) պահպանուելու մասին բանաձեւով («ետու ի պահեստի Ներսմիրհական ուխտի»): Բնական է, անշուշտ, որ Հայոց կաթողիկոսարան բերուած օրինակում բացակայում է Աղուանքում փաստաթղթերի պահպանման այդ բանաձեւը: Փոխարէնը՝ «հայկական» օրի-*

Ձեռ. թիւ 2966, թ. 120բ; թիւ 3062, թ. 199բ

Յառաջ քան զայս[1] շարժումն որ յաղագս հաւատոյ լեալ էր վասն Բակուրի, որ անուանեցաւն Ներսէս, որ եղեւ չկաթուղիկոս Աղուանից, որ ներկեալ էր պիղծ աղանդն Քաղկեդովնի եւ դարձուցեալ էր զբազումս յիւր ուխտէն իւրով չարութեամբն, եւ բաղում նեղութիւնս անցուցանէր ընդ եպիսկոպոսունսն եւ ընդ քահանայս եւ ընդ կրաւնաւորս: Մինչեւ եկի ես՝ Եղիա, շնորհիւն Աստուծոյ կաթուղիկոս Հայոց, հանդերձ եպիսկոպոսակցաւք իմովք, որք էին այսոքիկ [թուարկում է Եղիային ուղեկցող հոգեւորականներին[1] - Ա. Յ.] *ի Պարտաւ շահաստան: Որք ելին ընդ յառաջ մեր ամենայն յաւժարութեամբ եպիսկոպոսունք եւ մեծամեծ իշխանք եւ ամենայն ուխտ եկեղեցւոյ* [թուարկում է Աղուանից հոգեւորականներին եւ իշխաններին[1] - Ա. Յ.], *ելեալ ընդ առաջ մեր ամենայնքն մեծաւ ուրախութեամբ ընկալան զմեզ. որք եւ ասէին իսկ...:*

ՊԱ, Գ.թ (էջ 303)

Զշարժումն [clrv *ի շարժումն*] *չարափառին Ներսիսի, որ յԱղուանս էր, սակս հաւատոյ, եւ զներկումն երկաբնակ* [a *չիք երկաբնակ*] *աղանդոյն Քաղկեդոնի ի բազմաց սերմանեալ* [a *սերմանել*] *յոգիս, եւ խորամանկ չարութեամբն իւրով՝ վտանգեալ զեպիսկոպոսունս, զքահանայս եւ զկրաւնաւորս, վասն որոյ զգացեալ* [bclrv *գնացեալ*] *իմ՝ Եղիայի Հայոց կաթողիկոսի, եկի հանդերձ իմովք* [a *իմաւք*] *եպիսկոպոսաւք յԱղուանս՝ ի գերահռչակ* [bclrv *ի մեծ*] *քաղաքդ Պարտաւ: Եւ ժողովեցան առ իս հոգեւորք եւ մարմնաւորք եւ ցուցին ինձ զայն գիր...:*

---

1 Ձեռագրում՝ *Զշարժումն զայս*

© National Library of Armenia

նակն ունի իր համար աւելի սպասելի վերջաբան՝ «Եւ գրեցաւ գիրս այս վկայութեամբ երկոցունց կողմանց ի ՃԾԲ թուականութեան Հայոց եւ Զե թուականութեան Տաճկաց»: ՊԱ-ում «Միաբանութեան ձեռնարկն» այստեղ ունի. «ուԹսունՀինգերորդի [a Զե-երորդ, bl Զե-երորդի] ամին [a ամի] Տաճկաց եւ ի հայ թուականիս ՃԽԸ-ին [a ՃԽԸ, bl ՃԽԸ-ի], յամսեանն [a յամսեան] Հրոտից, եւ կնքեցաւ կամաւք մերովք եւ մատանեաւք [bclrv մատանովք], որոց անուանք [bl անուանքն] վերագրեալ են» (Գ.ը, էջ 302, տող 17-19):

Տուեալ դէպքում մեզ համար այստեղ կարեւոր է այն, որ «Էջմիածնական գիրք թղթոց»-ի փաստաթղթում ներկայացուած է Պարտաւի ժողովի որոշման բանաձեւը, որը թէեւ ոչ լրիւ բառացի, բայց գոնէ սկզբունքային հարցերում համընկնում է կամ պիտի համընկնի Մովսէս Դասխուրանցու արտագրած «Միաբանութեան ձեռնարկի» բանաձեւին: Դա թոյլ է տալիս մեզ ՊԱ Գ.ը գլխի բնագրի օգնութեամբ էապէս սրբագրել Եղիա Արճիշեցու թղթի՝ առանձնական տարբերակով ամբողջապէս պահպանուած միջնամասի ընթերցումները: Համառօտ յիշենք նաեւ, որ երկու տարբերակների բանաձեւերի համեմատութեամբ մեր նախորդ աշխատանքներում կատարել ենք ուշագրաւ դիտարկումներ, որոնք լոյս են սփռել ՊԱ բնագրի պատմութեան մի շատ կարեւոր խնդրում: Դրա շնորհիւ պարզ է դարձել, որ ԺԸ դ. կէսից յետոյ Ղունկիանոս դպիրը ՊԱ հնագոյն ձեռագրում (a = ՄՄ թիւ 1531, ընդօրինակուած՝ 1289 թ. Սաղմոսավանքում, Համազասպ եպիսկոպոսի պատուէրով. ի դէպ, միւս հնագոյն՝ bclr ձեռագրերը եւ l-ից արտագրուած i-ն ԺԷ դարի են) երեք փոքրիկ հատուածներ է քերել եւ փոխարէնն այլ տեքստ գրել[19] ոչ թէ Էջմիածնի եւ Գանձասարի կաթողիկոսութիւնների միջեւ վէճերով պայմանաւորուած պարզ խեղաթիւրման նպատակադրումով (ինչպէս համարում էին Խաչիկ վրդ. Դաղեանը եւ նրա կարծիքը հետագայում կրկնած մասնագէտները[20]), այլ իբրեւ աղբիւրագէտ իր առջեւ ունենալով հէնց «Էջմիածնական գիրք թղթոց»-ի փաստաթուղթը[21], որի՝ Ը դարի համար, իհարկէ, աւելի հաւաստի (բայց՝ միայն այդ դարի, եւ ո՛չ ամենեւին Ժ դարում իր ուրոյն նպատակները միջոցների մէջ խորութիւն չդնելով իրագործած Դասխուրանցի պատմիչի համար) տեղեկութիւններով էլ փոխարինել է Գ.ը գլխի նախնական՝ ԺԳ-դարեան բնագիրը. վերջինս, այսպիսով, անխաթար է պահպանուել ՊԱ Բ խմբի՝ իրար չյանգող bclrv գրչագրերում եւ a-ից 1730 թ. ընդօրինակուած h-ում[22]:

Տեղին է թւում մէկ անգամ եւս անդրադառնալ Եղիա Արճիշեցու «Գիր պայմանի»-ն հաստատած Պարտաւի ժողովի ժամանակի մասին մեր նախորդ դիտարկումներին: Ինչպէս նշեցինք վերեւում, ՊԱ գրչագրերում առկայ է Գ.ը գլխի «Զեռնարկի» հետեւեալ թուագրումը. «ՈւԹսունՀինգերորդի [a Զե-երորդ, bl Զե-երորդի] ամին [a ամի] Տաճկաց եւ [a չիք եւ] ի հայ թուականիս ՃԽԸ-ին [a ՃԽԸ, bl ՃԽԸ-ի], յամսեանն [a յամսեան] Հրոտից»: Հայոց «ՃԽԸ» (148) թուականն ընկնում է 699-700 թթ., իսկ Հիջրէի «ուԹսունՀինգերորդ» (Զե) թուականը՝ 704 թ. Յունուարից Դեկտեմբեր: Այս թուագրումների չհամընկնելը դժուարացնում էր Պարտաւի ժողովի ժամանակի ճշտումը, թէպէտ ուսումնասիրողների մեծ մասը իրական էր համարում 704 թուականը, քանի որ Եղիա Արճիշեցին կաթողիկոս էր դարձել 703-ին: Պարտաւի ժողովի ժամանակը հաստատապես 704 թ. վերագրել թոյլ է տալիս նորայայտ առանձնական թուղթը, որը պարունակում է Հայոց թուականի մի լրիւ այլ տարբերակ՝ «ՃԾԲ [152] թուականութանն Հայոց»: Իսկ դա ընկնում է Հիջրէի 85 թուականի հետ համընկնող 703-704 թթ., եւ հաշուի առնելով ՊԱ բնագրում պահպանուած վկայութիւնը հայկական տարուայ նախավերջին՝ Հրոտից ամսուայ մասին, կարողանում ենք համեմատական աղիւսակների օգնութեամբ որոշել, որ Պարտաւի ժողովը տեղի է ունեցել 704-ի Ապրիլի 29-ից Մայիսի 28-ն ընկած երեսնօրեակում[23]: Ինչ վերաբերում է ՊԱ հաղորդած «ՃԽԸ» վրիպեալ տարբերակի առաջացմանը (իրական «ՃԾԲ»-ի փոխարէն), ապա դա կարելի է, թերեւս, բացատրել հետեւեալ ենթադրութեամբ. ըստ երեւոյթին, Դասխուրանցուն հասել էր գրչական ինչոր սխալի արդիւնք «ՃԾԸ» ձեւը (Բ տառը հեշտութեամբ կարող էր շփոթուել Ը-ի հետ, եթէ հորիզոնական գծիկը մի փոքր ցածր էր դրուում[24]), եւ պատմիչը, լաւ իմանալով (ըստ գլ. Գ.ժզ-ի), որ Պարտաւի ժողովի մասնակից Շերոյ իշխանին արաբները գերեցին ու Ասորիք տարան Հայոց ՃԾԳ թուականին (մեր կարծիքով՝ հիմքում պիտի լինէր «ՃԾԴ». Գ եւ Դ տառերը եւս գրիչները յաճախ էին շփոթում), եւ հետեւաբար՝ ՃԾԸ թուականին նա չէր կարող Աղուանքում լինել, ուղղակի փոխել է վերջին թիւը «ՃԽԸ»-ի[25]:

---

19 1289 թ գրչագրի այդ եւ այլ յետնամոյծ թերութիւններն առաջինը նկատել է Խ. վրդ. Դաղեանը, որը նաեւ հրատարակել է ԺԷ դարի վերականգնման ժամանակ կորսուած երկու թերթերի բնագիրը Բ խմբի գրչագրերից (տե՛ս Խ. Վ., *Մովսէս Կաղանկատուացւոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս Մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները*, - «Արարատ», 1895, էջ 235-238, 333-348, 388-390, 424-426): Հնագոյն ձեռագրի այդ թերի վիճակից ԺԸ-ԺԹ դդ. կատարուել են բազմաթիւ ընդօրինակութիւններ (առաջինը՝ Ղունկիանոսի կողմից՝ 1761 թ.՝ g), որոնք հիմք են ծառայել երկար շրջանառուած՝ 1860 թ. մոսկովեան ու փարիզեան հրատարակութիւնների եւ 1861 թ. ռուսերէն թարգմանութեան համար: Յաւոք, ԺԸ դ. քերուած-փոփոխուած բնագիրն է իբրեւ հիմնական ընդունուել նաեւ 1983 թ. քննական հրատարակութիւնում (Բ խմբի բնագիրը եւ *h* գրչագրի ընթերցումները թողնելով տողատակում), թէպէտ ուղղումը կատարուած էր արդէն 1961 թ. անգլերէն թարգմանութեան մէջ:

20 **Խ. Վ.** [Դաղեան], Նիւթեր Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան համար, «Արարատ», 1897, էջ 70: Հմմտ. *The History of the Caucasian Albanians* by **Movsēs Dasxuranci**. Translated by **C. J. F. Dowsett**, London, 1961, էջ XIV:

21 Միւս դէպքում էլ ԺԸ դարի «աղբիւրագէտ» Ղունկիանոսն իր աջեւ ունեցել է Անանիա Մոկացու յայտնի՝ «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից...» թուղթը (հրատարակուած Գ. Տէր-Մկրտչեանի կողմից՝ «Արարատ», 1897, էջ 124-144, վերահրատ.՝ **Գ. Տէր-Մկրտչեան**, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, Աշխատասիրութեամբ **Պ. Հ. Յակոբեանի**, գիրք Բ, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 1998, էջ 92-124): Այդտեղ Մոկացին հատուածներ է քաղել իր տեսած «Պատմութիւն Աղուանից»-ից, սակայն դա ոչ թէ Դասխուրանցու երկն էր, այլ վերջինիս լոկ աղբիւր ծառայած՝ մանր երկերի ու փաստաթղթերի մի ձեռագրական ժողովածոյ:

22 Ներկայացուած բնագրագիտական խնդրի մասին մանրամասն տե՛ս մեր նախորդ աշխատանքներում՝ ՊԲՀ, 1981, հ^{ր} 4, էջ 142-148; ԲՄ, 15 (1986), էջ 112-113; *Албания-Алуанк* (1987), էջ 152-154, 206-207; 262-263:

23 Մեր 1981 թ. յօդուածում չիմացութեան պատճառով օգտագործել էինք Է. Դիւլորիէի հնացած աղիւսակները (**E. Dulaurier**, *Recherches sur la chronologie arménienne*, Paris, 1859, էջ 385) եւ Հայոց ՃԾԲ թուականի Հրոտիցի համար երկու ամսուայ սխալ կատարել («704 թ. Փետրվարի 27-ի եւ Մարտի 28-ի միջեւ»): Այդ վրիպումը շտկել ենք արդէն 1987 թ. մենագրութեան մէջ (տե՛ս *Албания-Алуанк*..., էջ 277): Այստեղ ժամանակագրական աղիւսակներն օգտագործել ենք ըստ՝ **V. Grumel**, *La chronologie*, Paris, 1958; **Б. В. Цибульский**, *Современные календари стран Ближнего и Среднего Востока*, Москва, 1964; **Բ. Ե. Թումանեան**, *Հայ աստղագիտութեան պատմութիւն*, Եր., 1970; **Հ. Ս. Բաղալեան**, *Օրացոյցի պատմութիւն*, Եր., 1970:

24 Ը-Բ գրչական վրիպակի յաճախութեան մասին տե՛ս **Նորայր Ն. Բիւզանդացի**, *Նախնիք*, Հրատարակութեան պատրաստեց **Մ. Մինասեան**, Ժնեւ, 1996, էջ 43. հմմտ. *Պատմութիւն* **Սեբէոսի**, Աշխատասիրութեամբ **Գ. Վ. Աբգարեանի**, Եր., 1979, էջ 219, ծնթ. 103; **Ա. Յակոբեան**, *Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է դարի վերջին - Ը դարի սկզբին*, էջ 289, ծնթ. 36:

25 Կարելի է նաեւ կրկնել, որ Պարտաւի ժողովի ընդունած փաստաթղթերի թուագրումն այսպէս կոչուած Հայոց թուականով պաշտօնական գրագրութեան այդպիսի թվագրման վաղագոյն

© National Library of Armenia

Եղիա Արճիշեցու թղթերից առաջինը ներկայացնում ենք ՊԱ-ում Մովսէս Դասխուրանցու արտագրած բնագրով՝ նշելով այդ երկի a եւ bclrv ձեռագրերի տարընթերցումները եւ ծանօթագրելով Յովհաննէս Դրասխանակերտցու շարադրանքի ընթերցումներով (նշանակելով դրանք D տառանիշով): Իսկ երկրորդ թուղթը վերահրատարակում ենք[26] ըստ «Էջմիածնական գիրք թղթոց»-ի երկու գրչագրերի, նշանակելով դրանք A (ՄՄ, թիւ 2966) եւ B (ՄՄ, թիւ 3062) տառանիշերով: Վերջին դէպքում ՊԱ ձեռագրերի սովորական տառանիշերով (abclrv) նշում ենք այն տարընթերցումները, որոնք առկայ են Դասխուրանցու երկի Գ գրքի Թ գլխում, որը նոյն բնագրի համառօտուած տարբերակն է, իսկ նախորդ՝ Ը գլխի ընթերցումները նշելու համար կիրառում ենք պայմանական տառանիշեր՝ ac, bc, cc, lc, rc, vc: Առանց ծանօթագրելու փոփոխում ենք ձեռագրային կէտադրութիւնը եւ կիրառում ժամանակակից բանասիրութեան մէջ ընդունուած տրոհում: Ամենուր օ-ն փոխում ենք աւ-ի, իսկ ֆ-ը՝ եւ-ի: Երկրորդ թղթում յատուկ անունները հիմնականում թողնում ենք նոյնութեամբ՝ բաւարարուելով միայն ՊԱ-ի ընթերցումներով ծանօթագրելով:

«Էջմիածնական գիրք թղթոց»-ի երկու՝ թէկուզ եւ բաւականին ուշ գրչագրերի, «Պատմութիւն Աղուանից»-ի գրչագրերի երկու խմբերի (a ձեռագիր եւ bclrv ձեռագրեր՝ bl եւ crv ենթախմբերով) օգտագործմամբ եւ, մի դէպքում՝ Յովհաննէս Դրասխանակերտցու շարադրանքի համեմատութեամբ կազմուած Եղիա Արճիշեցու թղթերի քննական ընթերցումները մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրանց ուղերորդդարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրերի տողատակերում հաշուի չեն առնուած Մովսէս Դասխուրանցու երկի երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են վերը նշուած վեց ձեռագրերից որեւէ մէկից եւ չեն կարող օգտակար համարուել անգամ Ժ դարի հեղինակի ինքնագրի վերականգնման հարցում:

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

A - ՄՄ ձեռ. թիւ 2966, ժամանակը՝ ԺԷ դ.

B - ՄՄ ձեռ. թիւ 3062, ժամանակը՝ 1765-1767 թթ.

a - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակը՝ 1289 թ.

b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակը՝ 1675 թ.

c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակը՝ 1664 թ.

h - Անթիլիասի կաթողիկոսարանի մատենադարանի ձեռ. թիւ 54, ժամանակը՝ 1730-1737 թթ.

l - Ռուսաստանի Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ս.-Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, ձեռ. C 59, ժամանակը՝ 1678 թ.

r - Բրիտանական թանգարանի ձեռ. Or 5261, ժամանակը՝ ԺԷ դ.

v - Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ձեռ. թիւ 1485, ժամանակը՝ ԺԷ դ.

օրինակներից է եւ, իբրեւ այդպիսին՝ միանում է փաստերի այն շարքին, որը ժամանակին թոյլ է տուել նորոգ հանգուցեալ Պարոյր Մուրադեանին մերժել Յովսէփ Օրբելու առաջադրած ու աւանդական դարձած տեսակէտը, իբրեւ թէ Հայոց թուականն սկսել է կիրառուել միայն Թ դարում (տե՛ս **П. М. Мурадян**, *Хронология систем летосчислений по армянским источникам - «Армянская эра»*, - «Вестник обществ. наук» АН Арм. ССР, 1976, № 1, էջ 49-64):

26 Հմմտ. ՊԲՀ, 1981, հ^{մր} 4, էջ 149-151:

ԹՈՒՂԹ ԵՂԻԱՅԻ[1] ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ[2] ԱՌ ԱԲԴՂՄԵԼՔ ԱՄԻՐՄՈՄՆԻ[3]

Տիեզերակալ Աբդլայի ամիրմոմնւոյ[4] յեղիայէ[5] Հայոց եպիսկոպոսապետէ[6]:

Յամենակալէն Աստուծոյ ունիմք զծառայական աշխարհս հնազանդ Զերոյ տէրութեանդ[7], եւ[8] մեք եւ Աղուանք զմի[9] հաւատ պաշտել[10] ունիմք զՔրիստոսի աստուածութիւնն[11]: Իսկ այժմ՝ որ Աղուանիցն է[12] կաթողիկոս[13] նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ[14] ընդ կայսերն[15] Յունաց՝ զնա քարոզէ յաղաւթս եւ զաշխարհն ստիպէ[16], զի ի հաւատ[17] եւ ի միաբանութիւն նմա եկեսցեն:

Արդ՝ զիտութիւն Զեզ լիցի, եւ մի՛ անփոյթ արասջիք[18] վասն այդորիկ, զի կին մի մեծատուն խորհրդակից է նորա, զորս պատուհասակոծ հրամայեսջիք առնել[19] մեծ իշխանութեամբ Զերով՝ ըստ արժանի իւրեանց գործոց, զոր առ[20] Աստուած կամեցան մեղանչել[21]:

---

1 *bclrv չիք* Եղիայի

2 *l* կաթուղիկոսի

3 *a* Աբդղմեղք ամիրմումնի ի նոյն խորհուրդ *փխ* Աբդլմելք ամիրմոմնի *(bclrv)*

4 *bc* ամիրմոմնոյ

5 *bcrv* յԵղիաէ

6 *a* էպիսկոպոսապետէ / *D* մեծն Եղիա զիմաստութիւն եւ զընդարձակութիւն սրտի ի գործ արկեալ, գրէ թուղթ առ ամիրապետն Իսմայէլեան Ոմար, զեկուցանելով նմա, թէ... *փխ* Թուղթ ... եպիսկոպոսապետէ *(5 տող)*

7 *crv* տիրողութեանդ, / իշխանութեանդ *փխ* տէրութեանդ *(ab)*

8 *bclrv չիք* եւ

9 *bclrv* զի *փխ* զմի *(a)*

10 *bclrv չիք* պաշտել *(a)*

11 *bclrv* աստուածութեանն *փխ* աստուածութիւնն *(a)*

12 *b* չիք է

13 *l* կաթուղիկոս

14 *bclrv* տարեալ փխ արարեալ *(a)*

15 *a* կայսէրն

16 *a* զաշխարհս ըստիպէ *փխ* զաշխարհն ստիպէ *(bclrv)*

17 *c* հաւատս *փխ* ի հաւատ

18 *a* արասցես, *l* առնիցէք *փխ* արասջիք *(bcrv)*

19 *bclrv* հրամայեսջիք պատուհասակոծ լինել (*l* լինիլ) *փխ* պատուհասակոծ ... առնել *(a)*

20 *b չիք* առ

21 *b չիք* առ / *D* գոյ աստ յաշխարհիս մերում եպիսկոպոս մի եւ նոյնգունակ տիկին մի զուգակից եպիսկոպոսին, որք ի բաց բերեալ են ի հնազանդութենէ մեծի տէրութեանդ Զերոյ եւ ոչ միաբանին ընդ մեզ, որ միշտ զանուն քո յիշատակեալ քարոզեմք յաղաւթս մեր, այլ զթագաւորն Հոռոմոց քարոզեն, ի նա զաշխարհս մեր հնարին դարձուցանել: Եթէ ոչ անապարեսցես բառնալ զնոսա ի միջոյ աստի մերմէ, ընդհուպ իսկ հատուածեալ ի Հոռոմս ձեռնատուր լինին ի սակս հարկաց եւ յամենայն մասունս գործոց *[ձձ գործոյ] փխ* Յամենակալէն ... մեղանչել *(17 տող)*

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ
632-2012

© National Library of Armenia

ԳԻՐ ՊԱՅՄԱՆԻ ՏԵԱՌՆ ԵՂԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ[48] ԱՌ ԱՂՈՒԱՆՍ[49]

]Յառաջ քան զայս[50][շարժումն, որ յաղագս հաւատոյ լեալ էր վասն Բակուրի, որ անուանեցաւն[51] Ներսէս[52], որ եղեւ չկաթուղիկոս Աղուանից, որ ներկեալ էր[53] պիղծ աղանդն Քաղկեդովնի[54] եւ դարձուցեալ էր զրազումս [յ]իւր[55] ուխտէն իւրով չարութեամբն, եւ բազում նեղութիւնս անցուցանէր ընդ եպիսկոպոսունսն եւ ընդ քահանայս[56] եւ ընդ կրաւնաւորս: Մինչեւ[57] եկի ես՝ Եղիա, շնորհիւն Աստուծոյ կաթո]ղիկոս Հայոց[58], հանդերձ եպիսկոպոսակցաւք իմովք, որք էին այսոքիկ.

Սարգիս Ամատունեաց եպիսկոպոս,

Սիմէոն[59] Խոռխոռունեաց եպիսկոպոս,

Սարգիս[60] Ըստագայ[61] եպիսկոպոս,

Յովհաննէս[62] վարդապետ այլաւք եւ աշակերտաւք

ի Պարտաւ շահաստան[63]: Որք ելին ընդ յառաջ մեր ամենայն յաւժարութեամբ եպիսկոպոսունք եւ մեծամեծ իշխանք եւ ամենայն բնաւ ուխտ եկեղեցւոյ.

Յովհաննէս[64] Կապաղակայ[65] եպիսկոպոս,

Սիմէոն Հոշոյ[66] եպիսկոպոս,

Սահակ Ամարասայ եպիսկոպոս,

Սահակ Մեծ Կուսանից եպիսկոպոս[67],

այլեւ քրիստոսասէր ամենագով աղատք.

աստուածապահ Շերոյ պատրիկ եւ Աղուանից իշխան,

Ջալանքոյ[68] պատրիկ եւ Աղուանից սպարապետ,

Վարդան պատրիկ

եւ Նորին եղբայր տէր Գագիկ,

Բաբ ի Հրայհատեան[69],

Վախտանգ ի Վարազմանեան,

Պատրիկ ի Քորոյեան[70],

Վարազ ի Վարազվահանեան[71],

Թէոդորոս յԱնաստասեան,

Ռոստոմ ի Վարազաքեան[72]

Զաքմիհր ի Վարազքուրդաքեան,

Մահումատ ի Շերոյեան

---

48 *bcrv* պատասխանոյ [*l* պատասխանոյ] Հայոց կաթուղիկոսի Եղիայի *փխ* պայմանի տեառն ... կաթողիկոսի *(a) (1 տող)*

49 *AB* Յաղագս Եղիայի Հայոց կաթուղիկոսի *փխ* Գիր պայմանի ... Աղուանս *(abclrv) (3 տող)*

50 *Այս «Յառաջ քան զայս» բառերը, թերեւս, պիտի համարուեն «Էջմիածնական գիրք թղթոց»-ի ժողովածոն կազմողինը, ուստի՝ վերցնում ենք փակագծի մէջ:*

51 *B* անուանեցաւ

52 *abclrv* Զշարժումն [*clrv* Ի շարժումն] չարափառին Ներսիսի *փխ* շարժումն, որ ...Ներսէս *(AB) (2 տող)*

53 *B* ներկէր

54 *abclrv* յԱղուանս էր, սակս հաւատոյ, եւ զներկումն երկաբնակ [*a չիք* երկաբնակ] աղանդոյն Քաղկեդոնի ի բազմաց սերմանեալ [*a* սերմանել] յոգիս *փխ* եղեւ չկաթուղիկոս ... Քաղկեդովնի *(AB) (2 տող)*

55 *AB* իւր *(վերականգնում)*

56 *abclrv* խորամանկ չարութեամբն իւրով վտանգեալ զեպիսկոպոսունս, զքահանայս *փխ* դարձուցեալ էր ... քահանայս *(4 տող)*

57 *B* Մինչ

58 *abclrv* զկրաւնաւորս. վասն որոյ զգացեալ [*bclrv* գնացեալ] իմ՝ Եղիայի Հայոց կաթողիկոսի, եկի *փխ* ընդ կրաւնաւորս ... Հայոց *(2 տող)*

59 a_p Սիմեւոն

60 *AB* զՍարգիս *(վերականգնում ըստ ՊԱ, էջ 299.20)*

61 $a_p b_p c_p l_p r_p v_p$ Ռոտակայ

62 a_p Յովհաննէս, $b_p l_p$ եւ Յովհաննէս

63 *abclrv* իմովք [*a* իմաւք] եպիսկոպոսաւք յԱղուանս, ի գերահռչակ [*bclrv* մեծ] քաղաքդ Պարտաւ *փխ* եպիսկոպոսակցաւք իմովք ... Պարտաւ շահաստան *(7 տող)*

64 $a_p b_p c_p l_p r_p v_p$ Սիմէոն Աղուանից կաթողիկոս, Յովհաննէս *(AB)*

65 $a_p b_p c_p r_p v_p$ Կապարակա *փխ* Կապաղակայ *(ABl$_p$)*

66 *AB* Շոհայ, a_p Հոշւոյ *փխ* Հոշոյ *(վերականգնում ըստ $b_p c_p l_p r_p v_p$)*

67 $a_p b_p c_p l_p r_p v_p$ *չիք* Սահակ Մեծ Կուսանից եպիսկոպոս *(տե՛ս* եպիսկոպոս ... եպիսկոպոս*)*

68 *B* Ջալանքո / $a_p b_p c_p l_p r_p v_p$ Ջուանքոյ

69 $a_p b_p c_p l_p r_p v_p$ Հրահատեան

70 $a_p b_p c_p l_p r_p v_p$ Քարոյեան

71 *A* Վարազվահեան / $a_p b_p c_p l_p r_p v_p$ Վահան ի Վարազոհանեան

72 $a_p b_p c_p l_p r_p v_p$ Ռոստոմ ի Վարազ Աքոյեան

եւ ամենայն ազատք աշխարհիս, նաեւ բազմութիւն սրբասէր կրաւնաւորաց.

Քշիկ Մեհր Նիրհաս[73] վանաց վանական,

Գոտայ վանաց վանական,

Կատարոյ վանաց վանական,

Դաւիթ Կաղանգատուաց վանական,

Պետրոս Ստգունակերտի[74] վանական,

[Պաւղոս][75] Աղածոբայ վանականն

եւ այլ ճշմարիտք քահանայք, որք անխառն մնացեալ էին յամենայն աղանդոց: Ելեալ ընդ առաջ մեր ամենայնքն մեծաւ ուրախութեամբ ընկալան զմեզ, որք եւ ասէին իսկ[76].

«Այսաւր աւրհնեցաք եւ ընկալաք զկարգ եւ զհաւատ սրբոյն Գրիգորի եւ զամենայն ուղղափառացն զժողովսն: Ձմեր հոգեկիր հարանցն ընկալեալ է մինչեւ ցայժմ, վասն զի եւ էաք իսկ աշակերտք սրբոյն Գրիգորի եւ եղիցուք մինչեւ ցյաւիտեանս: Եւ յայսմեհետէ մի՛ ումեք եղիցի իշխանութիւն ելանել յաւանդութենէ սրբոյն Գրիգորի եւ ի ձերում միաբանութենէդ: Ապա եթէ ոք հանդգնեսցի նորաձեւութիւնս ինչ առնել արտաքոյ ճշմարտութենէն, եթէ յեպիսկոպոսաց ոք իցէ՝ ի բարձրութենէ աթոռոյն անկցի, եւ եթէ ի քահանայից իցէ՝ լուծցի, եւ եթէ յաղատ ոք իցէ՝ յեկեղեցւոյ Աստուծոյ որոշեսցի եւ չընկերս մի՛ խառնեսցի, մինչ ի կարգ ուղղութեան եկեսցէ:

Նոյնպէս եւ վասն ձեռնադրութեան աթոռոյս Աղուանից ամենեքեան մեք միաբանութեամբ այսպէս կանոնեցաք. քանզի սուղ ինչ ժամանակս յաշխարհիս մերոյ կաթո]ղիկոսք յեպիսկոպոսաց ձեռնադրեցան մինչեւ ցայժմ եւ լուծին զդաշինս ուխտին, որ ի մէջ Հայոց եւ Աղուանից, եւ վասն[77] զի անփորձ եւ անկիրթ եւ անընտրողս ձեռնադրեցան, յորոց ի ձեռն հերձուածեցաւ աշխարհս մեր, եւ պատուեցաւ միաբանութիւն ուղիղ դաւանութեան հաւատոյս, վասն այսորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ եւ ձերոյ սրբութեանդ, եթէ ի ձեռնադրութիւն կաթո]ղիկոսութեանս մերոյ ի յաթոռոյ սրբոյն Գրիգորի, որպէս եւ ի սկ]զբանէ իսկ էր, միաբանութեամբ եպիսկոպոսաւք եւ ազատաց ի սուրբ Գրիգոր եկեսցեն եւ անդ ձեռնադրեսցեն[78], որպէս եւ երանելի հարքն մեր, զի անդ իսկ ընկալաք զլուսաւորութիւն, եւ անտի իսկ եղեւ մեզ փրկութեան սկիզբն եւ առիթ, զի ճշմարտութեամբ գիտեմք[79], թէ զոր դուք ընտրէք՝ եւ ընդ փորձ հանէք, նա Աստուծոյ հաճոյ լինի եւ մեզ փրկութեան պատճառ[80]:

Եւ մի՛ լիցուք մեք իշխանութիւն ել[ա]նել[81] արտաքոյ սահմանիս այսորիկ, զոր ընկալեալ էին յառաջագոյն հարքն մեր: Ապա եթէ գիմասցի արհամարհելով ոք զհրաման միաբանութեան սահմանեալ կանոնիս ժողովոյս, գործեն[82] արտաքոյ ճշմարիտ վարդապետութեան: Եթէ ոք հանդգնեսցի գործել եւ անցցէ ի դաշինս ուխտին, որ ի միջի մեր եւ ձերոյ սրբութեանդ եղեալ սահման հաստատութեան, ձեռնադրողքն[83] լուծցին ի պատուոյն, ով եւ իցէ, եւ դատ տացէ առաջի Աստուծոյ իբրեւ ժպիրհ եւ յանդուգն եւ անընտրողս[84] եւ իր-

---

73 *a* Ներսմերհի, *bclrv* Ներսմիրհի

74 *Թերեւս, վերականգնելի է* Պետրոս]սի Տգոնակերտի / *ՊԱ-ում* Տիգրանակերտի, Տկոակերտոյ

75 *AB չիք* Պաւղոս *(վերականգնում ըստ ՊԱ)*

76 *abclrv* Եւ ժողովեցան առ իս հոգեւորք եւ մարմնաւորք *փխ* Որք ելին ... ասէին իսկ *(37 տող)*

77 $b_p c_p h_p l_p r_p v_p$ կաթողիկոսութեան մերոյ. նախկին յԵրուսաղէմէ [h_p յԵրուսաղէմ] ընկալան մինչեւ ցսուրբն Գրիգորիոս [h_p Գրիգորիս] եւ անդի [$h_p l_p$ անտի] ցայժմ յեպիսկոպոսաց մերոց առնուին [b_p առաք], իսկ այժմ; a_p կաթողիկոսացս Աղուանից այսպէս կանոնեցաք. քանզի ի սուղ ինչ ժամանակ կաթողիկոսքս մեր զկարգն յեպիսկոպոսացս մերոց առին, իսկ այժմ *փխ* աթոռոյս Աղուանից ... եւ վասն *(AB) (6 տող)*

78 *B* ձեռնադրեսցին

79 *B* գիտիմք

80 $b_p c_p h_p l_p r_p v_p$ եւ Հայոց աթոռոյն ձեռնադրութիւն Աղուանից [$b_p l_p$ յԱղուանից] աթոռակալէն լիցի, զի այս [h_p *չիք* այս] երիցագոյն է, քան զՀայոցդ; a_p որպէս եւ էրն ի սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն. եւ ճշմարտութեամբ գիտեմք, թէ զոր դուք ընտրէք, հաճոյ Աստուծոյ է եւ մեզ *փխ* որպէս եւ երանելի ... պատճառ *(AB) (6 տող)*

81 *AB* ելնել *(վերականգնում ըստ $a_p b_p c_p l_p r_p v_p$ - ՊԱ, էջ 311.11)*

82 *Գուցէ, վերականգնելի է* գործի

83 *B* ձեռնադրողքն

84 *B* անընտրողս

© National Library of Armenia

բեւ զարհամարհողս[85] պատուիրանացն Աստուծոյ, եւ ձեռնադրութիւն անվաւեր եւ ընդ ունայն եւ սուտ եւ ի դատապարտութիւն եղիցի՛»:

Արդ, որք վասն երկիւղին Աստուծոյ միաբանեսցին սահմանադրութեանս մերոյ կանոնիս՝ աւրհնեալ եղիցի՛ նա ի Տեառնէ եւ յամենայն ուղղափառ ծառայից Աստուծոյ եւ դասակից եղիցի սրբոց հարցն եւ ճշմարիտ հովուացն յարքայութեան երկնից: Իսկ որ դիմադարձ լիցի եւ արհամարհեսցէ եւ առ ոտն հարցի զհրամանս մեծի ժողովոյս, որ կանոնեալ սահմանեցաւ՝ ի մերմէ միաբանութենէս որոշեսցի եւ յամենասուրբ Հոգւոյն նզովեսցի եւ մասն եւ բաժին ընդ անհաւատսն լիցի եւ խոստացեալ արքայութեան Քրիստոսի մի՛ հասցէ[86]:

[Եւ ետու զայս անհոգութիւն[87] ձեզ սրբասիրաց, Քշիկայ՝ Ներսմիրհայ[88] վանից տանուտեառն եւ Գրիգորայ՝ Յովսիփայ վանից տանուտեառն[89]: Ես Եղիայ՝ Հայոց կաթողիկոս, հանդերձ իմովք[90] եպիսկոպոսաւքս առի զմիաւորութեան գիրդ ի ժողովոյդ Աղուանից եւ ետու զայս պայմանի գիր ձեզ, զի մի՛ ոք յանդգնեսցի թիւրել ինչ զեղեալ ուխտադրութիւնդ: Եւ զերկոսեան նամակդ կնքեալ իմով մատանեաւ՝ ետու ի պահեստի Ներսմիրհական[91] ուխտի[92], ի ձեռն սրբասիրի Քշիկայ[93] հաւր՝ պայման անհոգութեան[94]:]

Եւ[95] գրեցաւ գիրս այս վկայութեամբ երկոցունց կողմանց[96] ի ՃԾԲ թուականութեան Հայոց եւ Ձե թուականութեան Տաճկաց[97]:

---

85 *B* զարհամարհօղս

86 *abclrv* եւ ցուցին ինձ զայն գիր, որ յառաջ նզովեալ եւ ի բաց ընկեցեալ էր զՆերսէս ի [*a* ի Հայոց] կաթողիկոսութենէն [*bclrv* կաթուղիկոսութենէն]: Թէպէտ եւ նա [*bclrv* Նա թէպէտ եւ] բռնակալութեամբ կացեալ էր յաթոռն, սակայն նոյն եպիսկոպոսունքն եւ բովանդակ [*a* բաւանդակ] ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին գրով եւ կնքով, Աստուծոյ միջնորդութեամբ եւ մեաւք հանդերձ եւ պայմանեցին, եթէ՝ կամք ի նոյն հաստատութեանս եւ ոչ խառնիմք ի [*bclrv* խառնակիմք ընդ] պիղծ աղանդն [*bclrv* աղանդոյն] Քաղկեդոնի եւ ընդ չար վարդապետութիւնն Բակուրայ [*bclrv* Բակուրի]: Արդ՝ եթէ կան ի նոյն պայմանի եւ յաւանդութեան սուրբ հարցն, ընկալարո՛ւք զդոսա եւ սիրեցէք որպէս զհոգեւոր տեսուչս ձեր. ապա եթէ թիւրեսցի ոք յայսմ պայմանէս [*bclrv* ի պայմանէս յայսմանէ], կաթողիկոս կամ եպիսկոպոս, չունի իշխանութիւն ի ձեր վերայ [*bclrv* վերայ ձեր], այլ կալ ձեզ յեկեղեցիս ձեր եւ հանապազ անդադար աղաւթս մատուցանել առ Աստուած. ի ձեր վերայ իշխան Աստուած լիցի եւ ուղղափառ վարդապետք *փխ* «Այսաւր աւրհնեցաք ... մի՛ հասցէ» *(72 տող)*

87 *bclrv* անհոգութիւն զայս *փխ* զայս անհոգութիւն *(a)*

88 *a* Քշկա Ներսմերհի *փխ* Քշիկայ Ներսմիրհայ *(bclrv)*

89 *bclrv* Յուսիփայ [*bcrv* Յուսիփա] վանի տանուտեառն Գրիգորայ [*l* Գրիգորի] *փխ* Գրիգորայ ... տանուտեառն *(a) (1 տող)*

90 *a* իմ *փխ* իմովք *(bclrv)*

91 *a* Ներսմերհի *փխ* Ներսմիրհական *(bclrv)*

92 *bcl* ուխտ *փխ* ուխտի *(arv)*

93 *a* Քշկա, *bcr* Քշիկա *փխ* Քշիկայ *(lv)*

94 *AB չիք* Եւ ետու զայս ... անհոգութեան *(վերականգնում ըստ abclrv) (13 տող)*

95 $a_p b_p c_p l_p r_p v_p$ *չիք* Եւ *(lv)*

96 $a_p b_p c_p l_p r_p v_p$ միաբանութեամբ եւ Աստուծոյ միջնորդութեամբ վասն հաստատութեան հաւատոյ անշարժ լինելոյ ի մէջ երկոցունցս *փխ* վկայութեամբ ... կողմանց *(AB) (1 տող)*

97 *abclrv չիք* Եւ գրեցաւ ... Տաճկաց *(3 տող)* / $a_p b_p c_p l_p r_p v_p$ Ութսունհինգերորդի [a_p Ձե-երորդ, $b_p l_p$ Ձե-երորդի] ամին [a_p ամի] Տաճկաց եւ [a_p *չիք* եւ] ի հայ թուականիս ՃԼԸ-ին [a_p ՃԼԸ, $b_p l_p$ ՃԼԸ-ի], յամսեանն [a_p յամսեան] Հրոտից, եւ կնքեցաւ կամաւք մերովք եւ մատանեաւք [$b_p c_p l_p r_p v_p$ մատանովք], որոց անուանքք ի վերոյ [$b_p l_p$ անուանքն վերայ, *crv* անուանքք վերա] վերագրեալ են *փխ* ի ՃՄԲ թուականութեան ... Տաճկաց *(2 տող)*

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՂԲԱՏԵՑՈՒ ԱՂՕԹՔԸ (ԺԲ. ԴԱՐ)

Գայիանէ Թերզեան

Յովսէփ Հաղբատեցի վարդապետի անուամբ մեզ է հասել մի աղօթք՝ գրուած Հառիճի վանահայր Գրիգորի պատուէրով[1]: Աղօթքի գրչութեան ժամանակը կարելի է համարել Գրիգոր Հառիճեցու ապրած ժամանակաշրջանը, այն է՝ ԺԲ. դ. երկրորդ կէսը: 1173 թ. Հաղբատի մի ձեռագրում Յովսէփ վարդապետը յիշատակւում է որպէս կազմող. «Կազմեցաւ ձեռամբ Յովսեփայ վարդապետի եւ եդաւ յարկեղ Սրբոյ Նշանիս»[2]: ԺԴ. դարի մի գրիչ յիշատակարանում գրում է, որ ձեռագիրն ընդօրինակել է Բագնայրեցու ստոյգ եւ ընտիր օրինակից, «զոր սուրբ վարդապետին Յովսեփայ գտեալ թարգմանչացն գրաց ի մայրաքաղաքն Հաղբատ»[3]: Կ. Մաթեւոսեանը կարծում է, որ այս երկու ձեռագրերում յիշատակուած անձինք նոյնն են, եւ Յովսէփ վարդապետը ոչ միայն եղել է կազմող, այլեւ եկեղեցու «ձեռագրական պահոցով զբաղուող մարդ»[4]: Ցաւօք, Յովսէփ վարդապետի մասին այլ տեղեկութիւններ առայժմ չունենք:

Այս աղօթքի՝ Հաղբատում գրուած լինելու օգտին են խօսում նաեւ Գրիգոր Հառիճեցու նամակում տեղ գտած՝ Յովհաննէս Սարկաւագի մասին հետեւեալ տողերը. «Ցանկայի զայս լինէր ի մերմէ Սարկաւագէ, այլ Հոգին քեզ պատշաճեալ պահեաց... Հաւատա ինձ, որդեակ իմ, զի թէ զիմն ծեր զվերասացեալն իմաստուն՝ լքի ի մանկութենէ իմում, զմանուկ եւ զիմաստուն երկրորդ գտի ի ծերութեան իմում, առաւել բերկրութիւն սրտի»[5]: Փաստօրէն՝ Գրիգոր Հառիճեցին եղել է Յովհաննէս Սարկաւագի աշակերտը, որին վաղ տարիքում կորցրել է[6], եւ քանի որ ցանկանում էր, որ աղօթքը Սարկաւագը գրէր, բայց չստացուեց, թերեւս նրա մահուան պատճառով, ապա նա այդ գործը յանձնարարում է Հաղբատավանքի մէկ այլ վարդապետի՝ Յովսէփին, որին «Հոգին... պատշաճեալ պահեաց»[7], եւ որը, անշուշտ, Սարկաւագի պէս իմաստուն եւ աստուածային շնորհներով զարդարուած վարդապետ պէտք է եղած լինէր:

Գրիգոր Հառիճեցու նամակի բնագիրը եւ աշխարհաբար թարգմանութիւնը հրատարակել է Կ. Մաթեւոսեանը[8]. այստեղ մենք հրատարակում ենք միայն Յովսէփ վարդապետի աղօթքը:

Աղօթքը նախատեսուած է այն քահանաների համար, ովքեր, պատարագին ներկայ գտնուելով, չեն մասնակցում ծէսին եւ պատրաստւում են Հաղորդութիւն ստանալ պատարագիչ քահանայից: Այն բաղկացած է երկու մասից՝ բուն աղօթքից, որը սկզբում մի փոքր դաւանաբանական նեղրածութիւն ունի, ապա յաջորդում է ապաշխարութեան աղօթքը, եւ «Յետ ճաշակմանն՝ ասւում է Հաղորդութիւն ստա-

---

1 Գրիգոր Հառիճեցին եղել է նաեւ Մխիթար Անեցու պատմութեան պատուիրատուն:

2 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, ցուցակ Բ, թիւ 314, էջ 1268:

3 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց Լ. Խաչիկեանը, Երեւան, 1950, էջ 34:

4 **Կ. Մաթեւոսեան**, *Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները*, Երեւան, 2009, էջ 189-190:

5 ՄՄ ձեռ. թիւ 2680, 513աբ:

6 Յովհաննէս Սարկաւագը մահացել է 1129 թ. եւ թաղուած է Հաղբատավանքում:

7 ՄՄ ձեռ. 2680, 513ա:

8 Տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, նշ. աշխ., էջ 187-188:

© National Library of Armenia